

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԱԻՐԵԱՆ

ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱ

XV

ԽԶՈՒՄԸ ԹԱԳԱՌՈՐԻ ՀԵՏ

Որքան եւ դիւրահաղորդ, մեղմարարոյ ու հաճելի վարեւիակերս
պի տէր՝ Սայեաթ Նովան կծու լեզու ունէր եւ երբեմն նոյն իսկ չար
էր լինում: Նրա մեր ձեռքը հասած ոտանաւորներից մէկը ուղղւած
է արքայազն Վախտանգի դէմ: Այդ ոտանաւորը առած է յանդա-
րաստից 1751 թւին, Թելաւում, արքայազն Վախտանգի կողմից բա-
նաստեղծին հասցւած ինչ որ վիրաւորանքից յետոյ: Սայեաթ Նովան
Վախտանգին դատարկ զգումի հետ է համեմատում, դարմանում է,
թէ՝ ի՞նչ կարիք կայ էջերի սմբակները հինալոյ ներկելու եւ այլն,
եւ միաժամանակ մեծ դովեստով է խօսում իր մասին:

Այս յանդուգն արարքը, ըստ երեւոյթին, առանձին հետեւանք-
ներ չունեցաւ բանաստեղծի համար, բայց արդէն 1752 թ. վերջը
կամ 1753 թ. սկիզբը նա ուրիշ ինչ որ արարքով առաջ է բերում
հովանաւորի դժգոհութիւնը, եւ թագաւորի ու բանաստեղծի միջեւ
առաջ է դալիս սուր տարակարծութիւն, որ սպառնում է պատճառ
դառնալ վերջինիս արտաքսման արքունիքից: Կայ 1753 թւականը
կրող մի հայերէն ոտանաւոր (№ 8), որ բոլոր ուսումնասիրողները,
բացառութեամբ Գ. Սաստուրի («Նոր Ուղի», 1930, № 4-5, էջ 56),
կարծում են, թէ բանաստեղծի սիրուհուն է ուղղւած, իսկ Վալերի
Բրիւսովը, պ. Մակինցկանի առաջնորդութեամբ, վերագրում է մի
սիրահարութեան, որ, իբր թէ, Սայեաթ Նովան ունեցել է Իրակլի
Թագաւորի աջկայ հետ: Իրողութիւնն այն է, որ այդ ոտանաւորը
ինչպէս հիշտ է Լեթադրում Գ. Սաստուրը, վերաբերում է Իրակլի
Թագաւորին:

Ոտանաւորի բառացի իմաստն ու նրա ներքին բովանդակութիւ-
նը պարզ կերպով ուղղւած են թագաւորին. բանաստեղծը աշխատում
է հաշտուել նրա հետ. Իրակլիին համեմատում է Բոստամի որդի Զալի
հետ — դուռ Բոստամի Զալ քա՛հաւոր. համոզում է չհուսառայ թը-
նամիներին — դու քու սիրտըն իստակ պահէ՛, Խադի խօսկըն աւտալու
չէ. որ թագաւորը պէտք չէ որ անմեղին պատժէ — Բախալս տիղ դա-
գաք մի՛ անի. որ եթէ բանաստեղծը մի անգամ էլ յանցանք զործէ,

այն ժամանակ թագաւորը կարող է կտրել տալ նրա գլուխը — Թէ էսանց էլ սուչ ունենամ՝ գլխուխ արա՛ տալ, քափալուք: Ապա ցոյց է տալիս իր մօտիկութիւնը Իրակլի թագաւորի հետ հետեւեալ սքանչելի տողերով.

Թէկուզ բլիւմ, քէկուզ չրլիւմ՝ մէջլիսներուն սագ չի պակսի,

Թէ կու պակսիւմ, քի՛զ կու պակսիւմ՝ աշխարհիս մէ մագ չի պակսի

Այս շատ յարգալիւր եւ նոյն իսկ ազազական ոտանաւորի մէջ Սայեաթ Նովան տալիս է իր ստեղծագործութեան փայլուն, կարեւի է ասել՝ հրեղէն բնորոշումը.

Ամէն մարք չի կանա խրմի իմ ցուրբն՝ ուրիշ ցըրէն է,

Ամէն մարք չի կանա կարքա իմ գիրբն՝ ուրիշ գըրէն է:

Եւ վերջացնում է, հետեւեալ խիստ ուշադրաւ խօսքերով.—

Սայեաթ Նովա գերեզմանըն Հինդ, Հարաշ, Արաք մի՛ անի:

Ուզում է ասել, թէ Իրակլին չպէտք է հեռացնէ նրան իր արքունիքից, թէ արքունիքից հեռանալուց յետոյ նա ստիպւած պիտի լինի ուրիշ հովանաւոր փնտռել եւ այդ նպատակով՝ գնալ Հինդ, Հարաշ, Արաք ու այնտեղ մնալ մինչեւ մահ: Պարզ է, որ բանաստեղծը շատ է սիրում Վրաստանը, կապւած է Իրակլիի հետ եւ դժւարանում է թողնել Թիֆլիսն ու թագաւորական պալատը:

Խզումի առաջն այս անգամ առնւում է. թագաւորն ու բանաստեղծը հաշտւում են, եւ Սայեաթ Նովան նորից սկսում է փայլել Իրակլի Բ-ի արքունիքում, առաջ Թեյաւում, իսկ 1761 թւականից սկսած Թիֆլիսում, այլեւս միացեալ Վրաստանի արքայ Իրակլիի մօտ:

10-12 տարի անցած, սակայն, նոր գժտութիւն է առաջ դալիս Իրակլիի եւ Սայեաթ Նովայի միջեւ եւ այս անգամ արդէն ճակատագրական հետեւանքով բանաստեղծի համար. տեղի է ունենում վերջնական խզում: Ստոյգ յայտնի չեն ոչ խզումի պատճառները, ոչ էլ ճիշտ ժամանակը: Գ. Ասատուրը, հետեւելով Գ. Ախլերդեանին, ենթադրում է, թէ այդ խզումը տեղի է ունեցել 1759 թ. վերջերը, որովհետեւ այդ թւականից յետոյ Սայեաթ Նովայի ոչ մի երգ դուրս չի ելել: Լէոնիձէն կարծում է, թէ խզումը կատարւած պէտք է լինի ոչ վաղ քան 1762 թ. եւ ոչ ուշ քան 1768 թ., (երբ Սայեաթ Նովան ընդունեց կուսակրօնութիւն): Իսկ պրոֆ. Մելիքսեթբեքը ընդունում է 1762-1765 թւականները:

Թւում է թէ Մելիքսեթբեքի կարծիքը աւելի մօտ է իրականութեան. խզումը 1762 թ. առաջ կարող չէր պատահած լինել, որովհետեւ Իրակլին միայն 1761 թ. վերջերը դարձաւ միացեալ Վրաս-

տանի թագաւոր, իսկ Սայեաթ Նովան վրացերէն մի շարք երգերում իրեն կոչում է Վրաստանի եւ ոչ Կախեթիայի թագաւորի սաղանդար: Միւս կողմից, 1765 թ. ուշ էլ չէր կարող պատահած լինել, որովհետեւ այդ թւականին էր, որ Սայեաթ Նովան դրի առաւ իր երգերը հռչակաւոր Դաւթարի մէջ, որ նշանակւած է 1765 թ., իսկ յաջորդ 1766 թ. մենք Սայեաթ Նովային գտնում ենք այլեւս Թիֆլիսից դուրս, իրեւ Քահանայ Կախի գիւղում (այժմեայ Չաքաթալայի շրջանում): Իմ կարծիքով, ինչպէս կը տեսնենք քիչ վարը, Սայեաթ Նովան վրաց թագաւորի արքունիքից հեռացել է 1762 թ.ին:

Ինչպէս յիշեցինք, անյայտ են եւ խզումի պատճառները: Այդ մասին կարելի է միայն որոշ ենթադրութիւններ անել՝ հիմնւելով Սայեաթ Նովայի մի քանի ակնարկների վրա եւ համեմատելով նրա կեանքի մեղ ծանօթ փաստերի հետ: Վրացերէն ոտանաւորներից մէկում (Գրիշաշվիլի 123), որ յօրինւած է արքունիքից հեռանալուց բաւական անցած, յամենայն դէպս իր կնոջ մահւանից (1768) յետոյ, Սայեաթ Նովան, կարծես յետադարձ ակնարկով, արդարութիւն է խնդրում թագաւորից եւ այսպէս է բացատրում խզումի պատճառը.

Ով Սայեաթ Նովա, դու լեզուով բազմացրիր քո վշտերը,
արդ՝ պատրաստ քդիր ամախորժութիւնների:

Այս խօսքերից կարելի է միայն մէկ եզրակացութիւն հանել, ա՛յն, որ խզումի պատճառ եղել է բանաստեղծի ասած անզգոյշ խօսքը, կամ, աւելի ճիշտ, յօրինած անզգոյշ ոտանաւորը, որով նա վիրաւորել եւ անարգանք է հասցրել որեւէ բարձրաստիճան անձի: Այդ անարգանքը եղել է այնքան ծանր, եւ անարդւած անձը՝ այնքան ազդեցիկ, որ Իրակլին, հակառակ մեծ համակրանքի ու բարեկամութեան բանաստեղծի հանդէպ, ստիպւած է եղել նրան անդարձ հեռացնել իր պալատից: Դրան, անշուշտ, նպաստեցին եւ Սայեաթ Նովայի բազմաթիւ թշնամիները արքունիքում, որոնց մասին նա յաճախ յիշում է իր վրացերէն երգերում:

Արդ՝ ո՞վ էր այդ բարձրաստիճան անձը, որին անարգանք հասցրած լինելու համար այնքա՞ն թանգ գնով վճարեց մեր բանաստեղծը: Ինձ թւում է, որ այս հարցը լուծւում է Տակալշվիլիի, ապա եւ Լէոնիձէի հրատարակած այն խիստ յանդուգն պարսաւագրով, որ Սայեաթ Նովան ուղղել էր վրաց կաթողիկոս Անտոնիոսի հասցէին: Այդ պարսաւագրի մասին մենք արդէն խօսել ենք:*)

Սայեաթ Նովան իր պարսաւագիրը յօրինել էր այն ժամանակ, երբ Անտոնիոս կաթողիկոսական աթոռը կորցնելու վտանգի առ-

*) ՎԷՄ, Գ. էջ 16:

Ղեւ էր գտնուում եւ ի վիճակի չէր որեւէ ձեւով հակադդեւու բանաստեղծի յանդգնութեան: Եօթը տարի յետոյ, 1762 թ., չառ զրկանքներ ու նւաստացումներ կրելուց յետոյ, Իրակլիի շնորհիւ, Անտոնիոսը վերադարձաւ արարից եւ նորից զրաւեց կաթողիկոսական աթոռը: Նա հզօր կամքի եւ ոգու տէր մարդ էր եւ հազիւ թէ անպատիժ թողնէր իր հակառակորդներին: Գէթ նրա ժամանակակիցների կարծիքն այդ էր: Այսպէս, հէնց որ Անտոնիոսը վերադարձի լուրը հասաւ Թիֆլիս, նրա գլխաւոր հակառակորդներից եւ կաթողիկոսական աթոռից տապալւելու պատճառ եղողներից մէկը, արքայական աւագերէց Զաքարի Գարաշվիլին փախաւ Իմերեթիա, եւ մինչեւ մահ մնաց այնտեղ: Ինձ յայտնի չէ, թէ արդեօք Անտոնիոսը պահանջեց պաշտօնանկ անել անարգական երգի հեղինակ Սայեաթ Նովային, թւում է թէ կարիք էլ չկար այդպիսի պահանջի: միայն Անտոնիոսի վերադարձի լուրը բաւական էր, որ Սայեաթ Նովայի հակառակորդները յաջողէին հեռացնել տալ նրան: Հիմք կայ կարծեւ, որ բանաստեղծը ինք էլ հասկանում էր ինչը ի հուժիւնը: Վերեւ բերած վրացերէն յետադարձ ոտանաւորի մէջ բացատրած է իր անկման պատճառը. «Ո՛վ Սայեաթ Նովա, դու լեզուով բազմացրիր քո վիշտերը, արդ՝ պատրաստ եղիր անախորժութիւնների», այսինքն՝ այժմ պէտք է հատուցանես քո առաջնայ յանդուգն արարքների համար:

Առաջ բերած այս նկատումներով, ինձ թւում է, կարելի է ճշտութեամբ որոշել Սայեաթ Նովայի Իրակլի Բ. -ի սազանդարի պաշտօնից հեռանալու պատճառն ու ժամանակը: Պատճառը՝ վրաց կաթողիկոս Անտոնիոսին ուղղած պարսա-եբգն էր, ժամանակը՝ 1762 թ.:

Հետաքրքրական է այնտեղ նշել եւ այն յեղաշրջումը, որ տեղի էր ունեցել Սայեաթ Նովայի հոգում արքունական սազանդարութեան վերջին տասնամեակում: 1753 թւին, երբ տեղի ունեցաւ առաջին բախումը Իրակլիի հետ, բանաստեղծը յստակ կերպով տեսնում է իր ապագան. շնորհիւ իր տաղանդի նա հեշտութեամբ կարող էր սազանդարի պաշտօն գտնել մի ուրիշ արքունիքում, բայց անսահման սէրը դէպի Վրաստանն ու հովանաւորը ստիպում էին թախանձազին ինդրել Իրակլիին, որ չհեռացնէ իր մօտից: Տասը տարի անցած Սայեաթ Նովան այլեւս ուրիշ բան է մտածում: Վերեւ յիշած յետադարձ-ոտանաւորում նա ասում է.

Պաիի'ր Սայեաթ Նովային քեզ համար,
Թող մնայ մա (թէկուզ) ձիերի հետ այստեղում.

Նա հռչակած է քն մօտ քեփերում,
Զի՛ Երբայ ոչ խոնդֆարների, ոչ խամների մօտ:

Ինչպէս բացատրւած է, «Սայեաթ Նովան Դեսպան» գլխում,*) այս տողերը պէտք է հասկանալ այն մտքով, որ Սայեաթ Նովան շատ է ցաւում Իրակլի Թադաւորի արքունիքը թողած լինելու համար, որ նա պատրաստ է նոյն իսկ ամենանւաստացուցիչ վիճակում ապրել արքունիքում, բայց այլեւս Վրաստանից զուրս սաղանդարի պաշտօն չի փնտռի:

Ինչո՞ւ է այսքան փոխել բանաստեղծը, չգիտենք: Տարի՞քն էր արդեօք պատճառը — նա արդէն վաթսուներեք տարեկան էր — ընտանիքը — ամուսնացած էր եւ տէր երկու, գուցէ եւ երեք զաւակների, թէ՞ տարիքի հետ մէկ տեղ նրան սկսել էր դրաւել կեղեցիկ — վաղուց արդէն նրա հայրենի երգերում (3, 7, 11, 22, 36, 41 եւ այլն) նկատելի էր հետաքրքրութեան աճումը դէպի կեղեցիկ, Սուրբ Գիրքըն ու ինքնահայեցողութիւնը:

Յամենայն դէպս, Սայեաթ Նովան կատարեց իր խօսքը. Իրակլի արքունիքից հեռանալուց յետոյ ոչ միայն նոր հովանաւոր փրկաւորելու յեռելից չեղաւ, այլեւ քաշեց հեռացաւ բոլորովին աշխարհից:

XVI

ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱՅԻ ՍԻՐԱՀԱՐՈՒԹԻԻՆԸ

Իր նախորդ աշուղ Նաղաշ Յովնաթանի պէս, մեր բանաստեղծն էլ զերծ չէր «կանանոց տարտէն»:

Ամենքին յայտնի է, որ Սայեաթ Նովան իր երգերում երեք լեզուով իր գեղեցկուհի սիրականի գովքն է անում յաճախ: Սակայն ուսումնասիրողներից զրեթէ եւ ոչ մէկը ուշադրութիւն չէր դարձրել ու չէր պարզել այս հարցը: Առաջին անգամ 1913 թ. Սայեաթ Նովայի վալլուն ուսումնասիրող եւ նուրբ ու հեղինակաւոր մեկնաբան Նիկ. Աղբալեանը շօշափեց Թիֆլիսի Հայ Գրական Ընկերութեան (6-րդ երկկոյթում արտատանած ճառի մէջ:**) Իրեն յատուկ խորութեամբ եւ ներհունութեամբ Ն. Աղբալեանը, զանազան ոտանաւորներ

*) «Վէմ» Գ. էջ 17:

**) Աղբալեանի նաղը կրատարակած է Թիֆլիսի «Հորիզոն» րեբրի 1913 թ. № 59, 60 եւ 62-ում: Ես նրանից օգտւելու հնարաւորութիւն ունեցայ միայն շրմոքիւ Հ. Ն. Ալիմեանի բարեացակամ ու սիրալիր աջակցութեամբ, որի համար յայտնում եմ իմ խորիմ երախտագիտութիւնը: Յ. Զ.

րում տարտղնաժ նկատողութիւններէց եւ ակնարկներէց, վերահանգնել է Սայեաթ Նովայի սիրուհու դէմքը: Աղբալեանի գծած պատկերը հետաքրքրական է եւ մեծ փայլով է ներկայացւած:

Սայեաթ Նովայի սիրուհին, ըստ երեւոյթին, ամուսնացած կին էր, պատուաւոր ընտանիքից եւ լաւ շրջանից, երիտասարդ ու գեղեցիկ: Ունէր սիրուն մազեր եւ չքեղ հասակ: Սայեաթ Նովան նրանից ունէր մի տղայ: Յաճախ այցելում էր նրան, զրոյց էր անում հետը շատ բաների մասին, երեկոները անց էր կացնում մօտը ուրախ ու զւարթ, խմում էր նրա մատուցած գինին: Ամենից շատ ցանկանում է հետը տեսնել երկուսի համար էլ սիրելի վայրերում, ուրախ ու երջանիկ հանգիպումներ ունենալ եւ երգով ու ոսկէ սաղի նւագով զարմացնել իր սիրուհուն: Առանց սիրուհու՝ բանաստեղծի կեանքը կեանք չէր. նա աւելի ուրախ կը լինէր մեռնել, որովհետեւ գիտէր, թէ այդ գէպքում իր սիրուհին վրան լաց կը լինէր յուսահատ եւ մազերը չաղ կը տար իր զաւաղի վրա: Աւաղ, այդ սէրը բանաստեղծին ուրախութիւն եւ բախտ չէր բերում միշտ: Լինում էին վայրկեաններ, մանաւանդ սիրահարութեան վերջին տարիներին, երբ բանաստեղծը անտարբերութիւն էր նկատում սիրուհու կողմից, տեսնում էր, թէ նա այլեւս չի գնահատում իրեն, եւ այդ տանջանք էր պատճառում: Բայց այդ տանջանքները անցնում էին անմիջապէս, հէնց որ նա զարմօտը: Ըստ երեւոյթին, ասում է Աղբալեանը, գեղեցկուհին կամ ուրիշին էր սիրել եւ կամ նորից կապել էր ամուսնուն:

Աղբալեանի գծած պատկերը լրիւ չէ եւ բացատրւում է մի կողմից հեղինակի զգայապաշտութեամբ: Այսպէս, նա ասում է, թէ Սայեաթ Նովայի սիրուհու «մարմնի բոլոր անդամները ներդաշնակ» էին, մինչդեռ հայերէն Դ. երգից, որից Աղբալեանը շատ է օգտւել իր պատկերը գծելու համար, տեսնում ենք, որ գեղեցկուհին եղել է բաւական դէր, թերեւս եւ գունդ ու կլոր — «բօյճմէդ չուրս մատն ալէլի լըցվիլ է դօշդ ու թիկունքդ»: Այսքան լեցունութիւնը, նոյն իսկ հին ժամանակները, երբ դէր կինը առանձնապէս յարգի էր տրեւելքում, չէր կարող չնկատուել չափազանցւած եւ հազիւ թէ նպաստէր կնոջ գեղեցկութեան:

Միւս կողմից, իր ճառը կադմելիս, Աղբալեանը կարող էր օգտուել միայն Սայեաթ Նովայի հայերէն երգերից, մինչդեռ վրացերէն երգերում շատ նիւթ կայ՝ բնորոշելու համար թէ գեղեցկուհուն եւ թէ, մանաւանդ, նրա ու բանաստեղծի փոխյարաբերութիւնները: Թերութիւնը առանձնապէս նկատելի է սիրահարութեան վախճանի

վերաբերմամբ: Սիրուհու պաղելը Սայեաթ Նովայից Աղբալեանը բացատրում է նրանով, որ նա կամ սիրել է մէկ ուրիշին եւ կամ նորից կապել է ամուսնուն: Վրացերէն երգերն աւելի պարզ ձեւով են ներկայացնում սիրահարութիւնն ու գեղեցկուհու հոգեկան պատկերը եւ տալիս են վախճանի աւելի հասարակ բացատրութիւնը: Գեղեցկուհին, ըստ երեւոյթին, եղել է մատչելի ոչ միայն Սայեաթ Նովայի, այլեւ ուրիշների համար էլ, եւ Սայեաթ Նովայից զատ ունեցել է եւ այլ երկրպագուներ: Բանաստեղծը իմացել է այդ եւ սաստիկ տանջել իր սիրուհու անհաստատութիւնից: Զգաստութեան վայրկեաններին բանաստեղծը ներկեր չէր խնայում եւ ամենաբաց գոյններով էր նկարագրում նրա անտոհուութիւնը: Այսպէս վրացերէն երգերից մէկում (Գրիշաշվիլի, էճ 98) նա ասում է.

Ինչո՞ւ ես պիտի մտածեմ եւ ի՞նչը պիտի ողբամ,
 ո՞րք իմ վշտերից.

Ինձանից զատ փաներկու ուրիշի անուն եմ տալիս,
 այդ մի՞շտ է:

Մի ուրիշ բանաստեղծութեան մէջ (Գրիշ. էջ 111), աւելի վրձնական ձեւով է ասւած,

Ինչո՞ւ ես այդպէս հեռանում ինձանից,
 ո՞ւմ հետ ես կապել:

Պէտք է կարծել, որ սիրուհու փոփոխամտութիւնն է եղել գլխաւոր պատճառը խզումի Սայեաթ Նովայի եւ իր սրտի հատորի միջեւ:

Աղբալեանից յետոյ, սիրահարութեան վրա ուշադրութիւն դարձրեց եւ ռուս բանաստեղծ ու Սայեաթ Նովայի Թարգմանիչ Վ. Բրիւսովը, որ «Հայ Բանաստեղծութիւնը» հատորի յառաջաբանում ասում է. «Վրաց Թագաւորի արքունիքում զարգացաւ եւ նշանաւոր աշուղի հիմնական սիրահարութիւնը — նրա սէրը դէպի վրաց Թագաւորի դուստրը, որին ձօնւած է նրա բանաստեղծութիւնների մեծ մասը»: Եւ իր այս մտքի համաձայն, № 8 երգում («Դուռն էն գլխէն իմաստուն ես») քաֆալուրի բառը Բրիւսովը Թարգմանում է «Թագաւորի դուստր»: Ինչի՞ հիման վրա է նա այսպիսի ենթադրութիւն անում, մնում է բոլորովին չհիմնաւորւած: Գրիշաշվիլին, իսկ նրանից յետոյ Մելիքսեթբեքը Բրիւսովի այս ենթադրութիւնը բացատրում են նրանով, որ նա ուրիշ անձի վերաբերմամբ կատարւած փաստը վերագրում է Սայեաթ Նովային, բայց աւելի հաւանական է, որ Բրիւսովը ինքն է հնարել այդ փաստը, կամ նրա աշխատանք-

կից Պ. Մակինցեանը: Իրականութեան մէջ նման մի դէպք յայտնի է վրաց բանաստեղծ Բէշկիի (Վիսարիոն Գաբաշվիլի 1750-1791) վերաբերմամբ: Բէշկին առաջնակարգ բանաստեղծ էր, ժամանակակից Սայեաթ Նովայի, գտնւել է վերջինիս ուժեղ ազդեցութեան տակ եւ գրել նրա հետեւողութեամբ: Այս Բէշկին ահա սիրահարութիւն է ունեցել Իրակլի Բ.-ի աղջկայ հետ:

Վերջապէս, կայ եւ մի երրորդ տեսակէտ, ըստ որի Սայեաթ Նովայի սիրահարութիւնը եղել է աւելի պարզ ու սովորական եւ, հաւանաբար, աւելի մօտ իրականութեան: Այս հիմնւած է մի աւանդութեան վրա, որը, իբր թէ պահած մնացել է Հաւլաբարի հայերի մօտ: Այսպէս, աշուղ Սկանդար Նովան (1850-1917), որ երգում էր հայերէն եւ, գլխաւորապէս, վրացերէն եւ մեծ հռչակ ունէր անցեալ դարու վերջին քառորդին, Սայեաթ Նովայի սիրահարութեան մասին գրում է հետեւեալը. «... դարձնի կնգան սա (Սայեաթ Նովէն) ունէր մէ սրտով սիրած աղջիկ. Նորաշնի թաղումը կէնում է էլի, մէ փռանդ (կաթուղի) Սուօի աղջիկ, անումով Տալիթայ, վուրին շատ է էլի սիրելիս, շատ խաղիր ունէ նրա վրա ասած»^{*)}:

Նոյն բանը ասում է եւ Գրիշաշվիլին, որ Սայեաթ Նովայի սիրուհուն ցոյց է տալիս մի կաթուղի կին Տալիտա անունով — քուրջչու կին: Գրիշաշվիլին ասում է նոյնպէս, որ մի ուրիշ աւանդութեամբ Սայեաթ Նովայի սիրուհու անունն էր Սոնա:

Աղբալեանի հաշուով, այս սիրահարութիւնն Սայեաթ Նովան ունեցել է 45-47 տարեկան հասակում եւ վերջացրել է 1759 թւին:

Այսպիսով, Սայեաթ Նովայի հիմնական սիրահարութեան մասին էլ, որ այնքան խորունկ ազդեցութիւն է թողել նրա ստեղծագործութեան վրա, մենք չունենք եւ ոչ մի ստոյգ տեղեկութիւն: Սակայն եւ այնպէս, ով եւ եղած լինի նրա սիրոյ առարկան՝ սիրուն ու սիւզած դեղեցկուհի, թէ տղեղ ու հաստ մի արարած, մեծ բարոյականութեան տիպար, թէ սովորական թիթեւ վարք ու բարքի տէր մի կին, էականը այն է, որ բանաստեղծը նրա մէջ շատ հրապոյրներ է գտել. նա եղել է Սայեաթ Նովայի համար ներշնչման աղբիւր եւ մեծ ազդեցութիւն է արել նրա ստեղծագործութեան վրա: Թերեւս միայն այդ սիրահարութեան շնորհիւ է, որ բանաստեղծը տւել է իր խորքով ու ձեռով ամենէն խորունկ ու կատարեալ ստեղծագործութիւնները:

^{*)} Գ. Սկանդար-Նովայ, «Սայեաթ Նովայի շուրջը», Հովիտ, 1913 թ. 15 էջ 231:

XVII

ՍԱՅՆԱԹ ՆՈՎԱՆ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ

Դեռ 1852 թ. Ախմեդեանի կազմած կենսագրութեան հիման վրա ստեղծւել է մի տեսակէտ, ըստ որի Սայեաթ Նովան Իրակլիի արքունիքից հեռանալուց յետոյ, մի քանի տարի ապրել է հասարակական կեանքից հեռու, իսկ 1768 թ. յետոյ, երբ մեռաւ նրա կինը, քաջեց Հախպատի վանքը եւ ձեռնադրեց կուսակրօն: Հետագային ստացաւ վարդապետի աստիճան եւ այդպէս էլ մնաց մինչեւ մահ: Սայեաթ Նովայի վանական կեանքի մասին Ախմեդեանը ոչ մի տեղեկութիւն չի ունեցել եւ առաջ է բերում միայն իր ժամանակները Թիֆլիսում շրջան անող մի զրոյց, ըստ որի բանաստեղծը կուսակրօնի սքեմի տակ էլ պահել է սէրը զէպի երգը, քեամանչան ու մէջլիսները: Պատմում էր, որ ամէն անգամ երբ Հախպատի Թիֆլիս էր գալիս եւ լսում էր հռչակ ստացած մի նոր աշուղի մասին, ծըպտըած հազուստով եւ քեամանչան ձեռքին գնում էր մէջլիս եւ բաս բռնում նոր երգչի հետ՝ միշտ յաղթական դուրս գալով այդ պայքարից: Սակայն, ինքը Ախմեդեանը այդ տւանդութեան չի հաւատում եւ իր պատմութիւնը վերջացնում է հետեւեալ խօսքերով. «Բայց էս զրոյցքն է սրան նման զուարճ Թիֆլիզեցոց մտաց ցնորքն իսկի հաւատարու բան չեն, էնդուր որ մեր մեղօք հնացեալ կրօնաւորն կուէր կացնում կեանքն իր վաղեմի մեղքերու՝ աղօթքով ու պաս պահելով քալելումն»:

Բիչ յետոյ կը տեսնենք, թէ որքան ճիշտ է Ախմեդեանի ենթադրութիւնը:

Թէ հայ եւ թէ վրաց դրականութեան մէջ մենք գտնում ենք որոշ տեղեկութիւններ Սայեաթ Նովայի կեանքի մասին արքունիքից հեռանալուց յետոյ մինչեւ վանք մտնելը: Այսպէս, պրոֆ. Տակալձիլի ատաջ է բերում Սայեաթ Նովայի վրացերէն մի մուխամբազի սկիզբը (տպւած Գրիշաշվիլիի զրքում, էջ 107), որին կցւած է հետեւեալ գրութիւնը, որ Լէոնիձէն (էջ 27) վերագրում է իշխանազն Թէյմուրազին. «Սայեաթ Նովայի ասած մուխամբազը: Նա առաջ հայ տէրտէր էր, ապա երբ մտաւ վանք, յօրինեց (այս մուխամբազը):

Այս տեղեկութիւնը Սայեաթ Նովայի վերաբերող հայերէն գրականութեան մէջ մնացել էր բոլորովին աննկատելի եւ առաջին անգամ նրա վրա ուշադրութիւն դարձրեց Գրիշաշվիլին:

Յետոյ, 1905-1906 թ. Հրաչեայ Աճառեանը Թաւրիզում գտած

ձեռագրի նկարագրութեան մէջ^{*)} առաջ է բերում ձեռագրի հետեւեալ կտորը. «Ստեփաննոս քահ. գրիչ Թիֆլիսեցի, որդի Կարապետի, մականունն Սայեաթ Նովայ, էջ 97 ար»:

Հր. Աճառեանը լաւ էր հասկացել թէ ով էր այդ Ստեփաննոս քահանան: Մի բան, որ շատ էլ դժւար չէր նրա համար, որովհետեւ դեռ երեք տարի առաջ նա, Յ. Մանանդեանի հետ միասին, հրատարակել էր Սայեաթ Նովայի «վարքը»:^{**)} Բայց նրա այս յայտնադործութիւնը բոլորովին վրիպեց Սայեաթ Նովայով հետաքրքրուողների ուշադրութիւնից, եւ միայն աւելի քան քսան տարի յետոյ նորից լոյս աշխարհ հանեց Մելիքսեթեզը՝ դարձնելով հասարակութեան ընդհանուր սեփականութիւն:^{***)}

Մի ուրիշ ապացոյց էլ կայ, որ Սայեաթ Նովան իր հոգեւորական ասպարէզը սկսեց քահանայութիւնից: Վրաց գրականութեան մէջ գոյութիւն ունի «Կալմասորա»^{****)} անունով մի գիրք, որի մէջ կայ վրացերէն մի երգ, Գրիշաշվիլի (էջ 107) հրատարակածից տարբեր խմբագրութեամբ: Այդ երգում Սայեաթ Նովան զանգատուած է իր ճակատագրի եւ իրեն բաժին հասած դժբախտութիւնների վրա եւ, ի միջի այլոց, ասում է.

Ես եղել եմ աշխարհական, ինչի՞ւ էր հարկաւոր փեհմայութիւնը:

Վերջապէս մի վերջին վկայութիւն նոյն հարցի մասին, որի գիւտի սլափը դարձեալ ստուկանում է Մելիքսեթեզին (էջ 88-89): Սայեաթ Նովայի հայերէն երգերի հիմնական Դաւթարը 1852 թ. առաջին հետազոտութիւնից յետոյ Գ. Ախվերդեանի կողմից, այնուհետեւ մի քանի անգամներ քննութեան առարկայ են դարձրել վրաց. լեզուի անգլիսի փայլուն հեղինակութիւններ, ինչպէս ինքը Ախվերդեանը, Գրիշաշվիլին, Գէորգ Ասատուրը եւ մեր օրերի սաղանդար Սաշա Օգանէզաշվիլին: Նրանք բոլորն էլ երկարօրէն ուսումնասիր-

*) «Հանդէս Անսորեայ» 1907 թ.: 1910-ին լոյս տեսաւ առանձին գրքով: 97 էջի վրա նկարագրւած է խնդրոյ առարկայ ձեռագիրը № 32:

**) Յ. Մանանդեան եւ Հ. Աճառեան. «Նոր վկայք Հայոց», Վաղարշապատ, 1903:

***) Տես Սայեաթ Նովայի երկերի վերջին հրատարակութիւնը, Երեւան, 1931:

****) «Կալմասորա»-ն գրւած է 19-րդ դարի առաջին քառորդին եւ պարունակում է վրացի հոգեւորական իոնա Խելաշվիլիի 1800-1801 թ. կալմաս հաւաքելու նպատակով վրաստանում կատարած մամբրդութեան նկարագրութիւնը: Գրքում կան հետաքրքրական տեղեկութիւններ վրացիների եւ հայերի 19-րդ դարակների կեանքի մասին: Խելաշվիլին խօսում է եւ Սայեաթ Նովայի մասին: Մենք յոյս ունենք «Վէմ»-ում այս գործին մի քանի մի առանձին յօդւած:

րել են այդ Դաւթարը, կարդացել ու քննել բազմաթիւ անգամներ, և հակառակ դրան նրանց ուշադրութիւնից խուսափել են Դաւթարի լուսանցքի վրա արւած երկու մակադրութիւններ, որոնք թէեւ Ժամանակակից են Դաւթարին, բայց կատարւած են ուրիշի ձեռքով: Միայն Մ'Լիքսեթբէզը ուշադրութիւն դարձրեց այդ դրութիւնների վրա եւ առաջ բերեց իբրեւ Սայեաթ Նովայի կենսագրական նիւթ: Ահա այդ մակադրութիւնները, որոնք գրւած են վրացերէն տառերով, բայց թիֆլիսահայ բարբառով:

1). «Քրիստոս, թող Տէրը բարեբախտ պահէ Տէր Ստեփանին, թո՛ղ նա կարդայ ինք այս Դաւթարը եւ (անկատար) չթողնէ այս խնդրքը, եւ սրանով ինք ծառայութիւն մատուցած կը լինի»:

2). «Քրիստոս, թո՛ղ Տէր Ստեփանն բարեբախտ մնայ եւ կարդայ ինք այս դիրքը ի ողջութիւն իր զաւակների: Թող իմ խնդրանքը (անկատար) չմնայ եւ թող նա ծառայութիւն մատուցանէ ինք, մեղաւորին. Ամէն»:

Բացի կենսագրական տեսակէտից, այս դրութիւնները չափազանց հետաքրքրական են եւ որպէս կենցաղական փաստ. նրանք ցոյց են տալիս այն վառ հետաքրքրութիւնը, որ կար գէպի Սայեաթ Նովայի երգերը: Ըստ երեւոյթին, մակադրութեան հեղինակին յայտնի էր, որ Սայեաթ Նովան իր քահանայութեան վայրից Թիֆլիս գալիս մտերիմների շրջանում երգում էր իր երգերը, ուստի ինքն էլ յոյս է յայտնում լսել նրա երգը:

Որ Սայեաթ Նովան իր մօտիկ բարեկամներին երգում էր նոյն իսկ արդէն առաջացած տարիքում, երեւում է եւ «Կալմասորա»-յի հեղինակի ցուցմունքներից: Ուստի, ինձ թւում է, բոլորովին ճշմարիտ է Ախվերդեանի թերահաւատութեամբ առաջ բերած զրոյցը, թէ Սայեաթ Նովան հոգեւորական կոչում ստանալուց յետոյ էլ մասնակցում էր աշուղների մրցութիւններին:

Այս բոլորից յետոյ, կասկած չի մնում, որ 1762 թ. վրաց արքունիքը թողնելուց յետոյ, Սայեաթ Նովան ընդունեց քահանայական կոչում եւ դարձաւ ծխատէր քահանայ Կախի գերդում: 1768 թ. այրիանալուց յետոյ, ըստ հայ հոգեւորականութեան մէջ այն Ժամանակները տիրող սովորութեան, ձեռնադրեց կուսակրօն եւ մտաւ Հախպատի վանքը, ուր եւ մնաց մինչեւ մահ, վարդապետի աստիճանով:

Փարիզ,

(Վերջը յաջորդ անգամ)

